

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

սոցիալական շարժումների խնդիրներով հետաքրքրված երիտասարդ հետազոտողների համար

Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոնը սոցիալական շարժումների հետազոտությամբ հետաքրքրված հետազոտողներին հրավիրում է մասնակցելու շարժումների տեսությանը և հետազոտության մեթոդաբանությանը նվիրված դասընթացին: Դասընթացը մասն է կազմում Կենտրոնի Հայաստանում սոցիալական շարժումներին նվիրված ծրագրի և նպատակ ունի աջակցել հետազոտողներին զարգացնելու իրենց հետազոտական գիտելիքներն ու կարողությունները: Շաբաթական երկու հանդիպմամբ վեց դասից բաղկացած դասընթացը հնարավորություն կտա մասնակիցներին հայաստանյան սոցիալական շարժումների փորձը տեսնել առավել լայն՝ միջազգային փորձի համատեքստում, շոշափել դրանց ունիվերսալ բնույթը, քննարկել սոցիալական շարժումներով ի հայտ եկած քաղաքացիականության ըմբռնումները, կապը քաղաքական իրադարձությունների հետ և հասու լինել շարժումների ուսումնասիրություններում մշակված մեթոդաբանությունների, հասկացությունների կիրառությանը, հետազոտական տարբեր փուլերում անհրաժեշտ գործիքների կիրառությանը, առանձին դեպքերի քննությանը և այլն:

Դասընթացը վարում են սոցիալական շարժումների ուսումնասիրությամբ զբաղվող Հայաստանի և Մփյուռքի լավագույն մասնագետները:

Դասընթացը կմեկնարկի շարժումների ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ նվիրված ընդարձակ թեմայով՝

«Քաղաքացիական մշակույթ, քաղաքացիական հասարակություն, հասարակագիտական հետազոտության մեթոդներ»

որը կվարի քաղաքագիտության դոկտոր Վալենտինա Գևորգյանը: Նյութը կմատուցվի երեք դասախոսությունների ընթացքում:

Դաս 1. Փետրվար 8

Թեմաներ՝ Քաղաքացիական մշակույթ, քաղաքացիական հասարակություն, սոցիալական շարժումներ և քաղաքացիական անհնազանդության հասկացությունների զարգացումը, ոչ-բռնի պայքարի և ժողովրդավարության զարգացման փոխազդեցությունը պատմության ժամանակագրության մեջ, հասարակագիտական հետազոտություններում տեսությունների կիրառումը՝ տեսությունից մեթոդաբանություն, հետազոտության գործընթացի փուլերը, հետազոտություններում հասկացությունների կիրառումը և գործառնականացումը, էթիկական խնդիրներ:

Դաս 2. Փետրվար 10

Թեմաներ՝ Ոչ-բռնի պայքարի մեթոդների քննարկում, մեթոդաբանական հնարքների կիրառման քննարկում՝ քանակական և որակական տվյալների հավաքագրում, հարցումներ,

ֆոկլուս-խմբային քննարկումներ, մասնակցային հետազոտություն, դիտարկում (observation), գործընթացի հետազոտում (process tracing), անհատական աշխատանքների քննարկում:

Դաս 3. Փետրվար 24

Թեմաներ՝ Մեթոդաբանական հնարքների կիրառման քննարկում՝ դեպքի ուսումնասիրություն, երկրորդային տվյալների հավաքագրում և մեթոդաբանական հնարքների համադրում, բովանդակության վերլուծություն, լրատվամիջոցների վերլուծություն, անհատական աշխատանքների քննարկում:

Դասընթացի ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԸ կմատուցեն Հայաստանի Ամերիկյան համալսարանի դասախոս Ասպետ Գոչիկյանը և ՌԱՀՀԿ տնօրեն, վերլուծաբան Մանվել Սարգսյանը: Այն նույնպես բաղկացած կլինի երեք դասախոսությունից:

Դաս 4. Փետրվար 15

Թեմա՝ **Քաղաքացիական և հասարակական շարժումների դերը քաղաքական գործընթացների մեջ**

Բանախոս՝ Ասպետ Գոչիկյան

Դաս 5. Փետրվար 17

Թեմա՝ **Սոցիալական շարժումների ունիվերսալ բնույթը**

Բանախոս՝ Մանվել Սարգսյան

Դաս 6. Փետրվար 22

Թեմա՝ **Հայաստանում ծավալված սոցիալական շարժումները միջազգային համատեքստում**

Բանախոս՝ Մանվել Սարգսյան

Դասընթացը կմեկնարկի փետրվարի 8-ին և կավարտվի փետրվարի 24-ին: Դասընթացին մասնակցության համար կարող են դիմել սոցիալական շարժումների հետազոտությամբ հետաքրքրված կամ զբաղվող անձինք: Մասնակցության հայտը լրացնել հետևյալ հղումով https://docs.google.com/forms/d/1QTQcuizMCN4_iDVNygEtqEoEziRbD_E7czbiHtj71t8/edit : Դիմելու վերջնաժամկետն է 2022 թ. փետրվարի 4-ը:

Տեղեկություններ բանախոսների մասին

Վալենտինա Գևորգյանը, Բ.գ.թ., հասարակագիտական հետազոտությունների մասնագետ է, հետազոտական հետաքրքրությունը՝ հետխորհրդային երկրներում քաղաքացիական հասարակության զարգացման ուղիները: 2009-2011թթ. սովորել է Հայաստանի Ամերիկյան համալսարանի քաղաքագիտության բաժնում, ստանալով մագիստրոսի աստիճան: 2017-2021թթ. սովորել է Ֆրիբուրգի համալսարանի քաղաքագիտության բաժնում, ստանալով գիտության թեկնածուի աստիճան

Ասպետ Գոչիկյանը քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների դասախոս է: Վերջին 20 տարիներին նա դասավանդել է Հայաստանի և ԱՄՆի տարբեր ԲՈՒՀերում: Գոչիկյանը մասնագետ է փոքր պետությունների դիմագրաված մարտահրավերների շուրջ՝ կենտրոնանալով քաղաքացիական հասարակության, արտաքին քաղաքականության, քաղաքական զարգացումների և ազգայնականության վրա:

Մանվել Սարգսյանը Ղարաբաղ կոմիտեի առաջին հիմնադիր անդամներից է: 1992 թ. նշանակվել է Լեռնային Ղարաբաղի մշտական ներկայացուցիչը Հայաստանում, 1993-ին եղել է ԼՂՀ արտգործնախարարի խորհրդականը: 1995-1999 թթ. վերլուծաբան է աշխատել Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնում: 2000-2005 թթ. եղել է ԼՂՀ նախագահի միջազգային հարցերով խորհրդականը, իսկ 2006-2007 թթ.՝ Կովկաս ինստիտուտի վերլուծաբան: 2008-ից Սարգսյանն աշխատում է ՌԱՀՀԿ կենտրոնում որպես ավագ վերլուծաբան, 2011 թ. ապրիլից ՌԱՀՀԿ տնօրենն է:

[Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոնը](#)

հիմնվել է 1993 թվականին և վերագործարկվել է 2017-ին: Կենտրոնի նպատակն է եղել ազգային կյանքի և զարգացման հիմնահարցերը քննել ժամանակակից հասարակագիտական մտքի նվաճումների լույսի ներքո: Նրա գործունեության առանցքը կազմել են տեսական և փիլիսոփայական հարցադրումներով առաջնորդվող ճյուղային և միջճյուղային հետազոտությունները, որոնք վերաբերվում են հումանիտար մտքի ողջ սպեկտրին: Ներկայումս Կենտրոնի գործունեության առարկան են հայ հասարակության արդիականացմանը նպաստող գիտակարգային և միջգիտակարգային հումանիտար հետազոտությունները, ինչպես նաև դրանց ընթացքում ստացված արդյունքների հիման վրա իրականացվող հրապարակախոսական, հրատարակչական, գիտակազմակերպչական և կրթական աշխատանքները: